ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հոդված 27. Խորհրդի իրավասությունները

1. Խորհուրդը՝

1) սահմանում է Հանրային հեռարձակողի տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը և տեսալսողական ծրագրերի թիվը.

2) սահմանում է Հանրային հեռարձակողի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը և ուղղությունները.

3) հաստատում է Հանրային հեռարձակողի աշխատողների հաստիքացուցակը, պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ~~ձևերը,~~ պայմանները և վարձատրման կարգը.

4) սահմանում է Հանրային հեռարձակողի այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու զանգվածային լրատվության այլ միջոցներում.

5) սահմանում է Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթի անցկացման կարգը.

6) նշանակում է Հանրային հեռարձակողների՝ մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրեններին.

7) Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ նշանակում և ազատում է գործադիր տնօրենների տեղակալներին.

8) յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 20-ը լսում է Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության մասին գործադիր տնօրենների հաշվետվությունները.

9) Հանրային հեռարձակողների տնօրենների ներկայացմամբ պարբերաբար հաստատում է ծրագրային քաղաքականությունը.

10) հաստատում է իր կանոնադրությունը և Հանրային հեռարձակողի կառուցվածքը.

11) հաստատում է Խորհրդի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքացուցակը.

12) հաստատում է Հանրային հեռարձակողի լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները.

13) ստացված բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքերը և ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն.

14) առնվազն տարին մեկ կազմակերպում է Հանրային հեռարձակողների գործունեության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ ու հրապարակում դրանց արդյունքները.

15) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով իրեն վերապահված այլ իրավասություններ.

16) Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կարգավորող պետական մարմին.

17) հայտարարում է Հանրային հեռարձակողի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ.

18) գործադիր տնօրենների և նրանց տեղակալների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

19) անդամների ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում Խորհրդի նախագահին պաշտոնանկ

անելու վերաբերյալ Հանրային հեռարձակողների հիմնադրի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

2. Խորհրդի որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

3. Խորհրդի որոշումներն իրենց իրավասության շրջանակներում կատարում են Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները:

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է: